



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

<< 25 >> հոկտեմբերի 2012թ.

N: 268-Ա

ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ  
ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի «2012 թվականի աշնանային զորակոչը կազմակերպելու մասին» թիվ 1299-Ն որոշման 7-րդ կետի պահանջների.

1. Հաստատել /ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների/ տեղական զորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը (հավելված թիվ 1):

2. Զորակոչիկների բժշկական քննությունն անցկացնել համապատասխան զինվորական կոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովների միջոցով (հավելված թիվ 2):

3. Հանձնարարել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զինվորական կոմիսարներին

ա. ապահովել զինվորական կոմիսարիատներին կից բժշկական հետազոտման հանձնաժողովների արդյունավետ աշխատանքը և խստորեն հետևել օրինականության պահպանմանը,

բ. սահմանված ժամկետում ապահովել բոլոր զորակոչիկների ներկայությունը զինվորական կոմիսարիատ,

գ. ամենօրյա օպերատիվ կապ պահպանել մարզային զորակոչային հանձնաժողովի հետ,

դ. պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վերաբերող նյութերը ժամանակին ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության Շիրակի մարզային վարչության համապատասխան ստորաբաժանումներ,

ե. ապահովել զորակոչիկների կազմակերպված և հանդիսավոր ուղարկումը հանրապետական հավաքակայան:

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետին

ա. ապահովել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը և նրանց ներկայանալը զորակոչային տեղամասեր,

բ. զորակոչիկներին հանրապետական հավաքակայան ուղարկելու օրերին ապահովել մարզի զորակոչային տեղամասերում հասարակական կարգի պահպանումը և զորակոչիկների անվտանգ փոխադրումը:

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչության պետին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետին, Շիրակի տարածաշրջանային մաքսատան պետին

պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով 2012 թվականի աշնանային զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը մարզի սահմանային հաղորդակցության ուղիներում և զորակոչային տարիքի /1985-1994 թվականներ/ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ հանրապետությունից մեկնումը թույլատրել զինվորական

զորակներում զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով սահմանափակվելու, իսկ ամրակցման /նախնական հաշվառման/ վկայականներում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

4. Առաջարկել.

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների և կազմակերպությունների (անկախ կազմակերպման իրավական ձևերից) ղեկավարներին

բ. իրավասությունների սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ ըստ չվացուցակի, իրենց անհատական ծանուցագրերով.

գ. քրեական պատասխանատվության կանչված ու հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների թուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական և այլ միջոցներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և ստույգելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

5. Հանձնարարել.

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սպորտի վարչության ապահովության վարչության պետին

ա. մարզի բուժօգնականների ղեկավարների ուշադրությունը հրավիրել զորակոչի հետ կապված վարչերի ժամանակին լուծմանը, հետազոտման ուղարկվող զորակոչիկների առողջական վիճակի ստուգման գործընթացի կազմակերպմանը,

բ. պետական պատվերի շրջանակներում կատարել զորակոչի ենթակա քաղաքացիների բոլոր տեսակի հետազոտող գործիքային հետազոտությունները՝ ըստ զինվորական կոմիսարիատների կողմից տրված խնդիրների և հետազոտության արդյունքները ժամանակին ուղարկել համապատասխան զինվորական կոմիսարիատներ,

գ. զորակոչային տարիքի /1985-1994 թվականներ/ պատանիներին պլանային ստացիոնար բուժման նպատակով զինվորական կոմիսարիատների գիտությամբ, իսկ շտապ, անհետաձգելի դեպքերում համապատասխան օգնությունից հետո տեղյակ պահել համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատի տնօրենին և գրանցել հիվանդության նկարագրում,

դ. զորակոչիկներին սոնոգրաֆիկ հետազոտում, ռենտգեն զննում, ինչպես նաև կանխարգելիչ և բուժօգնություններ կատարելու նպատակով համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին հանձնարարել՝ ապահովել անհրաժեշտ քանակով երևակման նյութեր և պատվաստանյութեր:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին

ապահովել 2012 թվականի աշնանային զորակոչի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև զորակոչային տարիքի զինվորական կոմիսարիատների ուղղությամբ տարվող աշխատանքների պատշաճ օգնությունը մամուլում և հեռուստատեսությամբ:

Ինքնագրի հետ ճիշտ է

Ա. ԳԻՂԻՐՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ  
/ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ԿՈՐՄԻՑ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ/

**Գյումրու տեղական զորակոչային հանձնաժողով**

- Ա. Ղազարյան Գյումրու զինվորական կոմիսար /հանձնաժողովի նախագահ/  
Ա. Վարդանյան Ոստիկանության Գյումրու բաժնի պետի տեղակալ  
Գ. Մալխասյան Գյումրու քաղաքապետի տեղակալ  
Գ. Խաչատրյան <<Կարմիր Խաչի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության բժիշկ,  
ավագ բժիշկ  
Տ. Զուրկինա Գյումրու զինվորական կոմիսարիատի աշխատակից /հանձնաժողովի քարտուղար/

**Արթիկի տեղական զորակոչային հանձնաժողով**

- Ս. Գաբրիելյան Արթիկի զինվորական կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար  
/հանձնաժողովի նախագահ/  
Գ. Բարխոյան Ոստիկանության Արթիկի բաժնի պետի տեղակալ  
Ա. Անտոնյան Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ  
Ա. Կարախանյան Արթիկի քաղաքապետարանի ներկայացուցիչ  
Գ. Ասլանյան «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ  
Մ. Պետրոսյան Արթիկի զինվորական կոմիսարիատի աշխատակից /հանձնաժողովի քարտուղար/

**Ախուրյանի տեղական զորակոչային հանձնաժողով**

- Հ. Գրիգորյան Ախուրյանի զինվորական կոմիսար /հանձնաժողովի նախագահ/  
Յու. Գալուստյան Ոստիկանության Ախուրյանի բաժնի պետի տեղակալ  
Ս. Ավետիսյան Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ  
Ա. Իգիթյան Ախուրյան համայնքի ղեկավար  
Ռ. Գրիգորյան «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ  
Թ. Մանուկյան Ախուրյանի զինվորական կոմիսարիատի աշխատակից /հանձնաժողովի քարտուղար/

**Անիի տեղական զորակոչային հանձնաժողով**

- Վ. Կուրդինյան Անիի զինվորական կոմիսար /հանձնաժողովի նախագահ/  
Վ. Ալեքսանյան Ոստիկանության Անիի բաժնի պետի տեղակալ  
Զ. Խաչատրյան Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ  
Գ. Գրիգորյան Մարալիկի քաղաքապետարանի ներկայացուցիչ  
Գ. Խաչատուրյան «Մարալիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ  
Ա. Գևորգյան Անիի զինվորական կոմիսարիատի աշխատակից /հանձնաժողովի քարտուղար/

**Աշոցքի տեղական զորակոչային հանձնաժողով**

- Ա. Բաղդասարյան Աշոցքի զինվորական կոմիսար / հանձնաժողովի նախագահ/
- Բ. Գրիգորյան Ոստիկանության Աշոցքի բաժնի պետի տեղակալ
- Ս. Քոչարյան Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ
- Ս. Ալոյան Աշոցքի համայնքի ղեկավար
- Հ. Առուստամյան Աշոցքի «Տիրամայր Նարեկ» հիվանդանոցի բժիշկ
- Չ. Գրիգորյան Աշոցքի զինվորական կոմիսարիատի աշխատակից /հանձնաժողովի քարտուղար/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇՈՑԱԿՈՎԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ԳՅՈՒՄՐԻ

- |                     |                                |
|---------------------|--------------------------------|
| 1. Գ. Խաչատրյան     | - սրտաբան, թերապևտ, ավագ բժիշկ |
| 2. Ժ. Հարությունյան | - ակնաբույժ                    |
| 3. Հ. Վարձեյան      | - քիթ-կոկորդ-ականջաբան         |
| 4. Ա. Գասպարյան     | - ատամնաբույժ                  |
| 5. Գ. Մխիթարյան     | - հոգեբույժ                    |
| 6. Վ. Համազարյան    | - վիրաբույժ, վնասվածքաբան      |
| 7. Մ. Ամատունի      | - մաշկա-վեներաբան              |
| 8. Կ. Պետոյան       | - նյարդաբան                    |
| 9. Է. Սարգսյան      | - բուժքույր                    |

ԱՐԹԻԿ

- |                  |                         |
|------------------|-------------------------|
| 1. Գ. Ասլանյան   | - նյարդաբան, ավագ բժիշկ |
| 2. Ա. Ստեփանյան  | - ակնաբույժ             |
| 3. Մ. Մկրտչյան   | - քիթ-կոկորդ-ականջաբան  |
| 4. Հ. Դարբինյան  | - ատամնաբույժ           |
| 5. Շ. Յուզբաշյան | - հոգեբույժ             |
| 6. Կ. Մուսինյան  | - վիրաբույժ             |
| 7. Ա. Պետրոսյան  | - մաշկա-վեներաբան       |
| 8. Լ. Սարգսյան   | - թերապևտ               |
| 9. Մ. Հաջաթյան   | - բուժքույր             |

ԱԽՈՒՐՅԱՆ

- |                  |                        |
|------------------|------------------------|
| 1. Ռ. Գրիգորյան  | - թերապևտ, ավագ բժիշկ  |
| 2. Ծ. Ռուստամյան | - ակնաբույժ            |
| 3. Ս. Չախմախյան  | - քիթ-կոկորդ-ականջաբան |
| 4. Ա. Աբրահամյան | - ատամնաբույժ          |
| 5. Օ. Չախոյան    | - հոգեբույժ            |
| 6. Հ. Կիրակոսյան | - վիրաբույժ            |
| 7. Ս. Պետրոսյան  | - մաշկա-վեներաբան      |
| 8. Ս. Սարգսյան   | - նյարդաբան            |
| 9. Շ. Գրիգորյան  | - բուժքույր            |

ԱՆԻ

- |                    |                         |
|--------------------|-------------------------|
| 1. Գ. Խաչատուրյանց | - վիրաբույժ, ավագ բժիշկ |
| 2. Գ. Թադևոսյան    | - ակնաբույժ             |
| 3. Ա. Խաչատրյան    | - քիթ-կոկորդ-ականջաբան  |
| 4. Գ. Սարգսյան     | - ատամնաբույժ           |
| 5. Շ. Յուզբաշյան   | - հոգեբույժ             |
| 6. Լ. Ճաղարյան     | - թերապևտ               |
| 7. Ա. Պետրոսյան    | - մաշկա-վեներաբան       |
| 8. Գ. Ասլանյան     | - նյարդաբան             |
| 9. Զ. Բարսեղյան    | - բուժքույր             |

ԱՇՈՅՔ

- |                    |                         |
|--------------------|-------------------------|
| 1. Հ. Առուստամյան  | - վիրաբույժ, ավագ բժիշկ |
| 2. Հ. Կիրակոսյան   | - ակնաբույժ             |
| 3. Տ. Տոնականյան   | - քիթ-կոկորդ-ականջաբան  |
| 4. Ա. Խաչատրյան    | - ատամնաբույժ           |
| 5. Զ. Մարգարյան    | - հոգեբույժ             |
| 6. Ռ. Ավայան       | - թերապևտ               |
| 7. Վ. Հովհաննիսյան | - մաշկա-վեներաբան       |
| 8. Տ. Մինասյան     | - նյարդաբան             |
| 9. Ս. Բաղդասարյան  | - բուժքույր             |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ